ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail:
artashatmeria@artashat.am

N Ե-2520
<<21>>մայիսի 2024թ

<<Հազարաշեն>> ՍՊԸ-ի
Տնօրեն Հ.Հովնիկյանին
ՀՎՀՀ՝ 018163381,
գործունեության հասցե՝ ՀՀ,0014, ք.Երևան, Պ.Սևակի,1,
էլ.հասցե՝ hazarashen@mail.ru,
հեռ.՝ +374 91 018 769

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<Արտաշատ համայնքի փողոցները ճանապարհային նշաններով, լուսացույցներով և գծանշումներով կահավորելու նպատակով նախագծա-նախահաշվարկային ծաստաթղթերի մշակման, կազմման խորհրդատվական ծառայություններ>>-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄԱՀ-ԳՀԽՁԲ-24/50 ծածկագրով գնման ընթացակարգի վերլուծության արդյունքում պարզվել է, *հետևյալը* /հիմք՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության 20 մայիսի 2024թ. թիվ Ե/1233-24 գրություն/. Տեղեկագրում հրապարակված ԱՄԱՀ-ԳՀԽՁԲ-24/50 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից <<Հազարաշեն>> ՍՊԸ /ՀՎՀՀ՝ 018163381/-ն՝ համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստորի պետական միասնական գրանցամատյանի՝ Ընկերության 74,36% /բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 477500/ բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Գուրգեն Բենյամինի Հակոբյանը:

Պարզվել է նաև, որ <<Մառք>> ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 01236957/ 2023թ. հունվարի 10-ից մինչև 2025թ. Հունվարի 10-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<<Հազարաշեն>>ՍՊԸ-ի և <<Մառք>> ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ <<Հազարաշեն>>ՍՊԸ-ի 74,36% /477500 դրամ/ բաժնեմասի սեփականատեր Գուրգեն Բենյամինի Հակոբյանը հանդիսացել է նաև <<Մառք>> ՍՊԸ-ի տնօրեն:

<<Գնումների մասին>> օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, *գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում...*

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի /այսուհետև՝ Կարգ/ 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների

հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ *ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված*, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. Տվյալ իրավաբանական անձի բաժնեմասերի տասը տեկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. Տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղեկալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգալ մարմնի նախագահ, անդամ,

դ. Իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Ընդ որում կարգի 121-րդ կետի համաձայն՝ ***մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելու, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:***

Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 20 մայիսի 2024թ. թիվ Ե/1233-24 գրությունը, Արտաշատի համայնքապետարանի և Հազարաշեն ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 16-ին կնքված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/50 ծածկագրով պայմանագրի 7,3 կետը /Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ***ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:*** Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է/ Արտաշատի համայնքապետարանի և Հազարաշեն ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 16-ին կնքված ԱՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-24/50 ծածկագրով պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծել 2024թ մայիսի 21-ին:

1. Առաջարկել՝ Հազարաշեն ՍՊԸ կազմակերպությանը 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում վճարել պայմանագրի ապահովման 82 500 /ութսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի որակավորման ապահովման 123 750 /մեկ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր հիսուն/ՀՀ դրամ գումարները, որպեսզի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկվի: Հակառակ դեպքում պատվիրատուի ղեկավարը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի Լիազոր մարմնին, իսկ Հազարաշեն ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված պայմանագրի ապահովման և պայմանագրի որակավորման ապահովման ապահովումները սահմանված կարգով կներկայացնի ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ՝ վերոնշյալ գումարները գանձելու և Արտաշատի համայնքապետարանի ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Արտաշատ համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

Կատարող՝ աշխատակազմի գնումների բաժնի
Պետի պարտակ. կատարող Հ.Ղազարյան
հեռ.՝ 093 60 34 02